ժամանակին Հայ կաթողիկէից, էջ 347–349) և որ իր կարևորութեանը համար հոս նոյնութեամբ կ'ընդօրինակենք։

«Ստամպօլու վեց եկեղեցւոյ, քահանայիցն եւ միաբան ժողովրդեան. հասցէ շատ կարօտով ողջոյն հօրն մերոյ սուրբ հայրն մեր Տէր Գրիգոր վարդապետին. առաջնորդ եւ խաշանց բանակա-նաց, գլուխ եկեղեցւոյ, ախոյեան հաւատոյ. պա-րիսպ քրիստոնէից եւ կարկիչ անհաւատից. հո-վապետ հօտին տիրական. րաբունն նազելի. եւ ա-մենեցուն գովելի, շքեղաշուք շնորհալի. ի փա-ռաց զարդուն նոր Սիոնի. բոլորից տենչալի, եւ համայնից բաղձալի, գերամաքուր եւ ամենայն շնորհօք ի լի. բազմերջանիկ սուրբ հայրն մեր, տեառն տէր Գրիգոր քաջ րաբունապետիդ։ Ի հե-ռաստանէ իբր զմօտոյ մեծաւ փափաքանօք եւ ջերմեռանդ սիրով համբուրելով համբուրեմք զսուրբ զարշապարդ եւ շնորհակալ եմք ի քոյին օրհնութենէդ եւ հարցանելով հարցանեմք զքեզ ի բարին։ Եւ թէ զմեր անարժանութիւնս հարց-մանն արժան առնէք, նա՛ եւ մեք տկար հոգով, եւ առողջ մարմնով, ձերում սուրբ աղօթիւքդ։ Եւ արդ արժանապատիւ օրհնութեանդ ծանուցումն լիցի քեզ տէր վարդապետ որ Զաքարիայն՝ որ մանզուլ եղաւ շատ նեղութիւն եւ չարչարանք եղեւ մեզ, որ լուեալ էք բազմաց՝ որ զեկեղեցիքն շատ ռուսուէթ փողն հանեցին. այս ի մենէ պատրիարգ ուզեցին. մեր միտքն. ի մեր կամքն